

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ

28.05.2014

Հարգելի հայրենակիցներ:

Հայ ժողովրդի քաջարի զավակները 1918 թվականի մայիսյան կենաց ու մահու հերոսամարտերում կարողացան ծնկի բերել մեզ բնաջնջելու եկած թշնամուն եւ հրաշքով վերականգնել հայկական պետականությունը, որի նվաճումը մեր նախնիների հազարամյա երազանքն էր:

Հայաստանի Առաջին Հանրապետության հիմքերի վրա էլ շաղախվեցին ու վեր բարձրացան Հայաստանի Խորհրդային եւ Երրորդ Հանրապետությունները՝ պատվարելով Արցախի ազատագրումը:

Հայոց պետականության օրվա առթիվ ջերմորեն շնորհավորում եմ համայն հայությանը, ցանկանում հարատեւ խաղաղություն, ընտանեկան ու անձնական երջանկություն, ստեղծագործ ու հզոր հայրենիք, բովանդակ հայության իղձերի իրականացում:

Ջերմ բարեմաղթանքներով՝

Գեղարքունիքի մարզպետ

Ռաֆիկ Գրիգորյան